

**S. ԵԶՐԱՍ ԵՊԻՄԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՆՅԱՆԻ ՔԱՐՈՉԼ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՀՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ
Ա. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(25 դեկտեմբերի 2004 թ.)

*«Նաստակուն և սույր պահեա զուսա ի
կոչումս, յոր կոչեցար».*

*«Նաստակուն և սույր պահիր սրանց ի-
րենց կոչումի մեջ, որին կոչեցիր»:*

(Զեննադրության Մաշտոց)

«Յանուն Հօր և Որդույ և Նոգույն Սրբոյ. ամէն»:

Սիրելի բարեպաշտ հավաքացյալ հայորդիներ, հոգեզվարք այն զգացմունքները, որոնք այս պահին համակեն են մեր սիրուն ու հոգին, մղում են մեզ աղոթք բարձրացնել, գո- հություն և փառք վերառաքել առ Բարձրյալն Աստված, Ով բարի կամոր մեզ շնորհ արեց Ս. Սրբեփաննոսի հիշաբակի ոգեկոչման այս նվիրական տոնին Ս. Նոգու շնորհաբաշխ զորու- թյամբ ձեռնադրել Գևորգյան Նոգենոր Ծեմարանի և Վազգենյան Նոգենոր Դպրանոցի յոթա- նասուն սաների՝ դպրաց, ուրարակրաց և սարկավագաց՝ այս փասնյոթ նորընծա սարկա- վագների ձեռնադրության սրբազն խորհուրդը կապարել Հայոց սրբություն սրբոց Միած- նական Սուրբ Սեղանի լուս խորանի վրա:

Ուրախ է այսօր Հայոց Եկեղեցին, ուրախություն, որի ընդմեջեն գալիս ենք շնորհավորե- լու նախևառաջ և շնորհակալություն հայրնելու ազգիս Վահափառին՝ Հայոց Տայրապետին, որի իմաստուն առաջնորդության և հայրական սիրո ներքո հավաքրի վկաների և առ հայ- րենին սիրո մարդիրոսված նահապակների արյամբ ձեռքբերված անկախացյալ ազակ Հայրենիքում այսօր հոգենոր զարթոնք ու վերածնունդ է ապրում մեր Սուրբ Եկեղեցին և ազգս հայոց: Ուրախություն, որ մղում է մեզ այսօր մեր շնորհակալությունը բերել Գևորգ- յան և Վազգենյան Ծեմարանների փետչությանը՝ ի դեմք Եղիշե ավագ քահանա Սարգսյա- նի և Մկրտիչ արեղա Պառշյանի, ողջ դասախոսական կազմին, բոլոր նրանց, ում ջանքերով և հոգածությամբ այսօր շեն են Հայ Եկեղեցու սիրով հանդիսացող կրթական հասդարութ- յունները մեր Եկեղեցվո, որի մեջ իրենց հոգենոր, միային, իմացական գիւղելիքներն ու կը- թությունն են ձեռք բերում առ Աստված հավաքրով կանչված հայորդի մեր զավակունք:

Գալիս եմ նոյնպես իմ ուրախությունը կիսելու և իմ շնորհակալությունը բերելու ձեզ, սի- րելի ձնողներ, որ Ասքծո օրինությամբ շնորհն եք ունեցել ձնելու ազգիս և մեր Սուրբ Եկեղեցուն պարզելու նման զավակներ, որոնք այսօր նորադրունկ իրեն դրունկներ ապրունում են պարագներ ծառեր մեր Եկեղեցու հոգենոր անդասդանի մեջ՝ վկայությամբ իրենց

հավատքի, իրենց սիրո, իրենց նվիրումի առ Աստված, առ Հայրենին մեր, առ մշակույթը, պատմությունը մեր սուրբ նախնյաց:

Խորհրդանշական է և միանգամայն տեղին, որ սարկավագների ձեռնադրության նվիրական խորհրդող կագարում ենք Սուրբ Սրբեփաննոս Նախավկայի՝ առաջին սարկավագի, վասն Քրիստոսի սիրույն և հավատքի անդրանիկ նահարակի հիշարժակի օրը այն հավաքքով, այն համոզումով, որ եթե երկու հազար տարիներ առաջ ժամանակի անօրենները, չընդունելով Տիրոջ բերած փրկարար վարդապետությունը և այն քարոզող առաջալներին, քարկոծեցին Սուրբ Սրբեփաննոսին, որը որպես այր իր զորությամբ և «Հնորհօք Տեառն» կենդանի քարոզիչն էր, վկան էր Տիրոջ սիրո և զորության:

Ինչպես մեր Հայրեն են անվանել, նա արդարության արեգակի ճառագայթն էր երկրի վրա: Քարկոծեցին, բայց արդյո՞ք սպանեցին Սուրբ Սրբեփաննոսին, ոչ երբեք, սիրելի հարազարդներ: Ինչպես կարելի է սպանել ճառագայթին, արեգակին, ինչպես կարելի է նահավակել ասպվածային սերը որպես զորություն իր հոգում կրող հավաքացյալին, նվիրյալին, որն ինքն էր՝ Սուրբ Սրբեփաննոսը: Հավաքքը անկարելի է սպանել և ոչ մեկին չի հաջողվել երկու հազար տարավա պարմության մեջ այն մեոցների: Վկան այդ կենդանի ապրող երաշագործ հավատքի մարմնավորված Եկեղեցին է մեր սուրբ, որ բոլոր ժամանակների խավարների մեջ եղել է ցրիք մեզ ու մշուշի, որ բոլոր դժվարին, ալեկոծյալ կյանքի պայմանների մեջ մոլորված մեր զավակների համար եղել է մշտապես կանթեղ անմար, փարոս դեալ իրեն կանչող, դեպ իրեն բերող իր զավակներին:

Այս, ինչպես ասել են մեր իմաստուն Հայրերը, ծանր է եղել թշնամու լուծը, սուր է եղել թշնամու սուրը, բայց առավել սրագույն է եղել հայոց հավաքքը, ամուր ու անսասան է եղել նրանց ոգին: Եվ այսօր, սիրելի հայորդիք, այս ոգին, այս հավաքքը, այս սերն ու նվիրումը մենք գետնում ենք մեր ընծայյալների կյանքի մեջ, ուսման մեջ, ծառայության մեջ՝ որպես հավատքի բորբառ, որպես Ասքծոն դասպանակ, որ գալիս են իրենց ամբողջական նվիրումով լծվելու Տիրոջ Ավելարանի քարոզությանը, գալիս են դաշնալու մշակը մեր ժողովրդի հոգևոր անդաստանի մեջ, և մենք այս նվիրական պահին աղոթք բարձրացնելով հայցում ենք, որ Տիրոջ ամենակարող զորության ներքո հասդարուն և անսայթաք անցնեն իրենց կյանքի ուղին և իր ժամանակին սրբանձնեն քահանայական, վարդապետական պաշտոններն ու ասպիճանները մեր Եկեղեցուց ներս:

Մեր ողջ ուրախությունը միաբանությունն է, որ դուք հասդար և սուրբ մնաք այս կոչումի մեջ, որին կոչված եք ի վերուսդ, և ձեր ծառայությամբ, ձեր կյանքով դատարակ կենդանի վկանները Սուրբ Սրբեփաննոսի, որով պայծառացնեք, բարեզարդեք, հզորացնեք մեր Սուրբ Եկեղեցին և վանեք մեր ազգի կյանքից այն բոլոր մոլորությունները, այն բոլոր «վարդապետությունները», որ փորձում են հեռացնել ճշմարիդ Քրիստոսից: Թող Աստված հովանի լինի ձեզ Սուրբ Դոգու երկնառար շնորհներով, այժմ և միշտ և հավիպյանս հավիլինից, ամեն: